ՀՏԴ 070:796.32 DOI: 10.53068/25792997-2025.2.15-342

ՄԵԴԻԱԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ա. Շ. Մկրտիչյան[1], Ք. Գ. Եղիազարյան[2],

[1]Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

[2]Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա, Երևան, Հայաստան,

Առանցքային բառեր: Վոլեյբոլ, մեդիա, մեդիագործիք, լուսաբանում, կայք, սոցիալական ցանց, լսարան, մեդիաառաջխաղացում:

Հետազոտության արդիականություն: Ժամանակակից աշխարհում սպորտի հանրահռչակման և զարգացման գործում մեծ դերակատարում ունի մեդիան՝ իր բազմազան գործիքակազմի կիրառման հնարավորություններով: Այդ համատեքստում վոլեյբոլը, իբրև սիրված և դիտարժան թիմային խաղերից մեկը, որը վերջին տարիներին նաև բավական տարածում ունի Հայաստանի Հանրապետությունում, համակարգված, պատշաճ և հետևողական մեդիաներկայացվածության կարիք ունի: Թեև մարզաձևի զարգացման հեռանկարները լայն են, սակայն անելիքները ոչ միշտ են համարժեք՝ հատկապես ընտրված գործիքակազմի առումով: Եվ քանի որ մեդիան՝ հատկապես թվային հարթակներում, այսօր որոշիչ դեր է խաղում սպորտի հանրայնացման, մրցակցային հետաքրքրության և հանրության ներգրավվածության ձևավորման գործում, ուստի կարևոր է նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը ոչ միայն հետաքրքրական է և արդյունավետ, այլ նաև ուղենշային կարող է լինել՝ հայաստանյան մեդիա իրականության համար առաջարկելով հնարավոր լուծումներ: Նշված թեմայով, մասնավորապես, վոլեյբոլ մարզաձևի, դրա լուսաբանման, առավել ևս մեդիագործիքների կիրառման կամ մեդիայի դերի վերաբերյալ գրականություն, ըստ էության, դեռևս չկա, ուստի աշխատանքը հիմնականում հիմնվում է նաև անկախ հետազոտության:

Հետազոտության նպատակն է՝ վերլուծել մեդիագործիքների կիրառման առանձնահատկությունները վոլեյբոլ մարզաձևի հանրայնացման գործում՝ ուսումնասիրելով ինչպես հայաստանյան մեդիադաշտում առկա իրավիճակը, այնպես էլ՝ միջազգային փորձը:

Հետազոտության խնդիրներն են՝

• Ուսումնասիրել ՀՀ-ում վոլեյբոլ մարզաձևի մեդիաներկայացվածության արդի վիճակը, նաև դիտարկել միջազգային փորձը:

• Վերլուծել մեդիագործիքների ազդեցությունը վոլեյբոլի հանրահռչակման վրա:

• Հիմնավորել մեդիագործիքների արդյունավետ կիրառման հնարավորությունները՝ հատկապես թվային հարթակներում վոլեյբոլի ճանաչելիությունն ու հանրության (հատկապես՝ դեռահասների և երիտասարդների) ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ մասնագիտական գրականության վերլուծություն, համեմատություն և լրագրագիտական ուսումնասիրություն: Թեմայի ուսումնասիրության համար առանձնացվել են 2023-2024 թվականներին հայաստանյան մեդիայում տեղ գտած նյութերը, դիտարկվել է նաև միջազգային փորձը:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում տեղեկատվությունն ունի բացառիկ կարևոր դեր [4]: Ժամանակակից աշխարհում սպորտը ոչ միայն մարդու ֆիզիկական ակտիվության և մարզիկների հնարավորությունների դրսևորում է, այլև՝ հանրային կապերի, բրենդավորման և հաղորդակցության հարթակ: Այս համատեքստում մեդիայի ազդեցությունը դրսևորվում է միաժամանակ մի քանի ուղղություններով՝ հանրության ուշադրության կենտրոնացում, սպորտային արժեքների տարածում, առողջ ապրելակերպի քարոզչություն, սպորտային ապրանքանիշերի առաջմղում, սպորտի՝ իբրև ժամանցի հանրայնացում և այլն: Ավանդական զանգվածային լրատվամիջոցները (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) երկար տարիներ եղել են սպորտի հանրայնացման հիմնական հարթակները, որոնք ձևավորել են հասարակության ընկալումը տարբեր մարզաձևերի վերաբերյալ: Հատկապես հեռուստատեսությունը՝ իր վիզուալ հնարավորություններով, էապես նպաստել է մարզական իրադարձությունների լայն հասանելիությանը և սպորտի՝ որպես մշակութային երևույթի ընկալմանը: Գլասգոյի համալսարանի հաղորդակցության պրոֆեսոր Ռայմոնդ Բոյլի դիտարկմամբ՝ մարզական լրագրությունը, ի տարբերություն ավանդական նորությունների, ձևավորում է ոչ միայն տեղեկատվական հաղորդակցություն, այլև՝ զգայական ներգրավվածություն՝ մարզասերների, հովանավորների և մարզիկների միջև[5]:

Ի տարբերություն ավանդական լրատվամիջոցների՝ թվային մեդիայի (կայքեր, սոցիալական ցանցեր) զարգացումը նոր հարթակներ է ստեղծել սպորտի ներկայացման և հանրահռչակման համար: Հատկապես սոցցանցերը (Facebook, Instagram, YouTube, TikTok, Telegram և այլն) դարձել են ոչ միայն սպորտային իրադարձությունների լուսաբանման միջոց, այլև՝ անմիջական հաղորդակցության և բովանդակության ինքնուրույն ստեղծման հնարավորություն նաև մարզիկների և մարզասերների համար: Հատկանշական է Ավստրալիայի պետական համալսարանի Մեդիայի և հաղորդակցության պրոֆեսոր Բրեթ Հաթչինսի և Արևմտյան Սիդնեյի համալսարանի մշակութային հետազոտությունների վաստակավոր պրոֆեսոր Դեյվիդ Ռոուի դիտարկումը, ըստ որի թվային մեդիան վերածևում է սպորտի սպառման ձևերը՝ այն դարձնելով համատեղ փորձառություն և վիրտուալ համայնքների ձևավորման գործիք[6]: Իսկ ռուս հետազոտող Ի. Կուզնեցովան ընդգծում է, որ սպորտային միջոցառումների մեդիագրավչությունը նպաստում է ոչ միայն սպորտի տնտեսական արժեքի աճին, այլև սպորտային ինդուստրիայի կայացմանը: Ավելին՝ մեդիան դառնում է ոչ միայն տեղեկատու, այլև շահագրգիռ մասնակից՝ ազդելով սպորտային քաղաքականության, մրցումների կառուցվածքի և նույնիսկ մարզիկների հեղինակության ձևավորման վրա[3]:

Անհերքելի է, որ թվային մեդիագործիքների կիրառումը մարզաձևերի ներկայացվածության գործում, մասնավորապես՝ վոլեյբոլի, կարող է և ունի հսկայական ազդեցություն: Վոլեյբոլը, որ մարզաշխարհում իր ուրույն ու կարևոր դերակատարումն ունի, պատմությանը հայտնի է անհիշելի ժամանակներից: Վոլեյբոլի նախատիպային խաղի մասին հիշատակվում է դեռ Ք.ա. 3–րդ դարում [2]: Ժամանակակից աշխարհում ընդունված է համարել, որ մարզաձևը ստեղծել է Ուիլյամ Գ. Մորգանը 1895-ին՝ ԱՄՆ-ում: Այն մեր օրերում համարվում է ամենադիտարժան և տարածված խաղը ֆուտբոլից հետո (ավելի քան 800 միլիոն մարդ ամբողջ աշխարհում զբաղվում է վոլեյբոլով)[14]: 1947 թ.-ին ստեղծվել է Վոլեյբոլի միջազգային ֆեդերացիան (FIVB): Վոլեյբոլի աշխարհի առաջին առաջնությունն անցկացվել է 1949-ին Պրահայում՝ տղամարդկանց համար, իսկ 1952 թ.-ին՝ Մոսկվայում, կանանց համար: Այդ ժամանակից ի վեր FIVB-ն աճել և դարձել է աշխարհի ամենամեծ սպորտային կազմակերպություններից մեկը՝ 222 անդամ կառույցներով: Չնայած Աշխարհի առաջնությունները շարունակում են մնալ խաղի գլխավոր գայթակղությունը՝ FIVB-ն ավելացրել է նաև

այլ մրցույթներ՝ ինչպես Համաշխարհային Լիգան, Համաշխարհային Մեծ մրցաշարը, Համաշխարհային Գավաթը, Մեծ չեմպիոնների գավաթը և այլն:

Հայաստանի մարզաշխարհի վետերանների վկայությամբ՝ Հայաստանում 1926 թ.-ին Գյումրիում է առաջին անգամ ցուցադրվել վոլեյբոլ խաղը, որը շատ արագ տարածվել է ամբողջ երկրով: Ամեն տարի անցկացվում էին հանրապետական առաջնություններ, անցկացվում էր գավաթի խաղարկություն, հանրապետության 4 քաղաքների միջև մրցաշարեր, ինչպես նաև պատանեկան տարբեր տարիքային խմբերի միջև մրցաշարեր և այլն[1]:

1964 թ.-ին Տոկիոյում վոլեյբոլն առաջին անգամ ընդգրկվեց Օլիմպիական խաղերի ծրագրում [2]:

Վոլեյբոլ մարզաձևը, որպես թիմային, դինամիկ և հուզական բովանդակությամբ հագեցած խաղ, վերջին տասնամյակում դարձել է մեդիագործիքների փորձարարական կիրառման կարևոր հարթակներից: Միջազգային կազմակերպությունները՝ ինչպես օրինակ՝ FIVB-ը[18] և CEV-ը (European Volleyball Confederation)[17], ձևավորել են կոնտենտի (բովանդակության) մշակման և տարածման թվային ռազմավարություններ, որոնք նպատակաուղղված են վոլեյբոլի գրավչության բարձրացմանը, մասնակիցների թվի ավելացմանը և սպորտային բրենդի ձևավորմանը: Հատկապես վերջին տարիներին FIVB-ը իր թվային ռազմավարության կենտրոնում դրել է բազմապլատֆորմային հաղորդակցությունը, որի միջոցով փորձ է արվում հասնել ինչպես ավանդական, այնպես էլ նոր սերնդի սպառողին: Տեղեկատվական հարթակների բազմազանությունը՝ ներառյալ YouTube-ի ուղիղ հեռարձակումները, Instagram Reels/Stories, TikTok Challenges, ինչպես նաև ինֆոգրաֆիկ նյութերի տարածումը այլ սոցիալական հարթակներում, հնարավորություն են տալիս ձևավորելու վոլեյբոլի շուրջ ընդգրկուն թվային համայնքներ: 2022 թվականին «Volleyball World»-ի նախաձեռնությամբ իրականացված թվային արշավները (օրինակ՝ #VolleyballWorld[22], #BePartOfTheGame[21]) նպաստեցին վոլեյբոլի դիտելիության աճին՝ հատկապես նոր սերնդի լսարանի շրջանակում:

Վոլեյբոլի համաշխարհային կազմակերպությունը 2023 թվականին հաստատեց իր տեղը թվային միջավայրում՝ գրավելով երկրպագուներին ամբողջ աշխարհում իր հետաքրքիր բովանդակությամբ և նորարար մոտեցմամբ: Այժմ Վոլեյբոլի համաշխարհային կազմակերպության YouTube-յան ալիքը շուրջ 3.8 միլիոն հետևորդ ունի[22], որտեղ

ներկայացված են հազարավոր տեսանյութեր, իրականացվում են ուղիղ հեռարձակումներ՝ վճարովի հիմունքներով դիտելու հնարավորությամբ: FIVB նախագահ դոկտոր Արի դա Սիլվա Գրասան նշել է. «Չնայած սպորտի թվային արդիականացումը սկսվել է FIVB-ից՝ Վոլեյբոլի համաշխարհային կազմակերպությունը դա տեղափոխել է հաջորդ մակարդակ, և մենք նկատում ենք երկրպագուների աճ, առավել քան երբևէ: Հպարտ եմ, որ կարողացել ենք հաղթահարել սահմանները և կոտրել պատնեշները՝ միավորելով աշխարհի տարբեր անկյուններից մեր հետևորդներին և ձևավորելով իսկապես գլոբալ վոլեյբոլային ընտանիք» [19]:

Վոլեյբոլի համաշխարհային կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն Ֆին Թեյլորը ևս մեծապես կարևորում է մեդիագործիքների կիրառումը՝ նշելով, որ թվային դարում շատ կարևոր է ունենալ ուժեղ առցանց ներկայություն[10]:

Հատկանշական է նաև, որ վոլեյբոլային միջազգային կառույցները մեդիագործիքներն օգտագործում են ոչ միայն լսարանին տեղեկատվություն փոխանցելու, այլև՝ մասնակցային մեդիա ձևավորելու նպատակով: Դրա արդյունքում լսարանը դառնում է ակտիվ մասնակից՝ ստեղծելով սեփական բովանդակությունը՝ խաղերից տեսանյութեր, մեկնաբանություններ, խաղացանկերի վերլուծություններ, մեմեր և այլն: Սա ամրապնդում է սպորտի շուրջ հաղորդակցային կապը և նպաստում երկարաժամկետ և հավատարիմ լսարանի ձևավորմանը:

Եվրոպական կոնֆեդերացիան (CEV) կարևորում է նաև մարզիկների դերը՝ որպես թվային բովանդակություն ստեղծողներ: Շատ դեպքերում մարզիկներն ունեն իրենց սեփական բլոգները կամ սոցիալական էջերը, որոնք առաջ են մղում ոչ միայն անձնական բրենդը, այլև վոլեյբոլն ընդհանուր առմամբ: Այս մոտեցումը համահունչ է նաև Հաթչինսի և Ռոուի տեսությանը, ըստ որի՝ թվային մեդիան թույլ է տալիս ապակենտրոնացնել տեղեկատվական հոսքերը և դարձնել սպորտը ավելի հանրային, մասնակցային և դինամիկ[6]:

Լատինամերիկյան փորձը ցույց է տալիս, որ մեդիաարշավները հաճախ կապվում են ոչ միայն մրցումային սեզոնի հետ, այլ նաև՝ կրթական, սոցիալական և մարքեթինգային արշավների: Օրինակ՝ Բրազիլիայի վոլեյբոլի ֆեդերացիայի նախաձեռնած «Սովորում ենք վոլեյբոլ» (Aprendendo Vôlei) կրթական նախագիծը, որը տարածվեց սոցիալական մեդիայում, միավորում է դպրոցականներին, մարզիչներին և մեդիաբովանդակություն ստեղծողներին՝ սպորտը տարածելու և նոր սերնդին ներգրավելու համար:

Վերջին տարիներին ակտիվացել է վոլեյբոլի ներկայացումը սոցիալական հարթակներում՝ Instagram, TikTok, YouTube, որտեղ բովանդակություն տարածում են ոչ միայն պաշտոնական աղբյուրները, այլև երկրպագուները և բլոգերները: Սա նպաստում է մարզաձևի ճանաչելիության և ներգրավվածության ավելացմանը:

Նպատակ ունենալով մեծացնել հանրային հետաքրքրությունը և ավելացնել մրցակցությունը՝ սոցիալական ցանցերը կարող են և նպաստում են այս մարզաձևի հանրայնացմանը՝ ապահովելով հասանելիություն և ընդգրկունություն, երկրպագուների ներգրավվածություն, լուսաբանումներ, ուղիղ հեռարձակումներ և այլն: Վոլեյբոլի մրցաշարերին և նորություններին կարելի է հետևել միջազգային և օտարերկրյա մի շարք հեղինակավոր թվային հարթակներում.

1. FIVB (https://www.fivb.com/) – Վոլեյբոլի միջազգային ֆեդերացիայի պաշտոնական կայքը ներկայացնում է լուրեր, առաջնությունների ժամանակացույցեր, արդյունքներ, մարզիկների մասին տվյալներ, ուղիղ հեռարձակումներ և այլն:

2. Volleyball World (https://en.volleyballworld.com/) – Աշխարհում վոլեյբոլին նվիրված ամենամեծ լսարան ունեցող լրատվական հարթակներից է, որը լուսաբանում է աշխարհի խոշոր առաջնությունները, մարզաձևի նորությունները, ներկայացնում վերլուծություններ, հարցազրույցներ, ապահովում հեռարձակումներ:

3. CEV (https://www.cev.eu/) – Եվրոպական վոլեյբոլի կոնֆեդերացիայի պաշտոնական կայքը ներկայացնում է Եվրոպայի առաջնություններն ու Չեմպիոնների լիգան, նաև՝ հայաստանյան առաջնությունները:

4. EEVZA (https://eevza.eu/) – Արևելյան Եվրոպայի երկրների վոլեյբոլի ասոցիացիայի կայքը անդրադառնում է նաև հայաստանյան մրցաշարերին:

5. NORCECA (https://norceca.net/) – Հյուսիսային, Կենտրոնական Ամերիկայի և Կարիբյան տարածաշրջանի վոլեյբոլի պաշտոնական կայքը ներկայացնում է վոլեյբոլի առաջնություններ, արդյունքներ, մրցաշարային աղյուսակներ, վիճակագրություն, տղամարդկանց և կանանց թիմերի մասնակցություն տարբեր տարիքային խմբերում և այլն:

6. Всероссийская федерация волейбола (https://volley.ru/) – Վոլեյբոլի համառուսաստանյան ֆեդերացիայի պաշտոնական կայքը վոլեյբոլի տեղեկատվական շտեմարան է Ռուսաստանի

ազգային թիմերի, լիգաների, առաջնությունների և այլ կարևոր իրադարձությունների մասին:

Այսպիսով, միջազգային փորձը վկայում է, որ մեդիագործիքների համակարգված և նպատակային կիրառումը մեծապես նպաստում է մարզաձևի, տվյալ դեպքում՝ վոլեյբոլի հանրայնացմանը, ավելին՝ վոլեյբոլը դառնում է նաև մեդիաարտադրանք:

Վոլեյբոլը՝ որպես միջազգային մարզաձև, մեծ տարածում ունի, սակայն այն հաճախ մնում է ֆուտբոլի, բասկետբոլի և այլ առավել կոմերցիոն մարզաձևերի ստվերում: Հայաստանում սպորտային մեդիայի զարգացումը վերջին տարիներին որոշակի առաջընթաց գրանցել է, սակայն առանձին մարզաձևերի՝ այդ թվում վոլեյբոլի լուսաբանումը շարունակում է մնալ ոչ համաչափ: Մինչ օրս վոլեյբոլի վերաբերյալ մեդիահոսքերը սահմանափակվում են հիմնականում մրցաշարերի և ազգային հավաքականի մասնակցությամբ փոքրաթիվ հաղորդումներով և հրապարակումներով, ավելին՝ շարունակական հանրայնացման և ռազմավարական հաղորդակցության պակասը խոչընդոտում է մարզաձևի մասսայականացման հնարավորությունները:

Դիտարկելով հայաստանյան առաջատար մեդիաահարթակները՝ ակնհայտ է, որ ֆուտբոլը և բասկետբոլն ունեն ավելի ընդգրկուն ներկայություն, փոխարենը վոլեյբոլին վերաբերող նյութերը հիմնականում ունեն իրադարձային բնույթ և չեն ձևավորում շարունակական տեղեկատվական միջավայր: Օրինակ՝ հրապարակումները սովորաբար սահմանափակվում են հետևյալ ձևաչափերով՝ «Հայտնի են տղամարդկանց վոլեյբոլի «Պրո Լիգա 2023-2024» առաջնության հաղթողները» [9], «Խաչատուր Ստեփանյանը կգլխավորի ՀՀ վոլեյբոլի տղամարդկանց հավաքականը» [15] և այլն, առանց վերլուծական կամ խորքային բովանդակության: Սա ցույց է տալիս, որ մարզաձևի լուսաբանումը դիտարկվում է որպես փաստ արձանագրող, այլ ոչ բովանդակություն ստեղծող գործընթաց:

Մյուս կողմից, Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիան ունի պաշտոնական կայք (http://www.armvolley.am/), որը ներկայում չի գործում, փոխարենն ունի սոցիալական էջեր (Facebook, Instagram), որտեղ տեքստային նյութերով, ֆոտոռեպորտաժներով, տեսանյութերով լուսաբանվում են հանրապետության տարածքում և դրանից դուրս տեղի ունեցող առաջնությունները: Ներկայացվում են դասական, լողափնյա և ձյան վոլեյբոլի բարձրագույն և երիտասարդական առաջնությունները: Տեղադրվում են հարցազրույցներ, արտասահմանյան ֆեդերացիաների հետ կնքած պայմանագրերի մասին տեղեկատ-

վություն և այլն: Բարձրագույն և միջազգային առաջնությունների ժամանակ ուղիղ եթերներով ցուցադրվում են անցկացվող հանդիպումները: Տարեվերջին ամփոփվում են տարվա արդյունքները: Ֆեդերացիայի ֆեյսբուքյան էջը 2025 թվականի հունիսի 1-ի դրությամբ ունի 6 հազարից ավելի հետևորդ, ինստագրամյան էջը՝ 1300: Ինստագրամյան էջում հիմնականում ներկայացվում են առաջնություններն ու տեղի ունեցող իրադարձությունները ֆոտոռեպորտաժներով և Reel-երով (կարճ տեսանյութեր): Տեսանյութերի դիտումները որպես կանոն անցնում են 5000-ը: Ֆեդերացիայի YouTube-յան ալիքը ակտիվությամբ զիջում է մյուսներին, այստեղ ցուցադրվում են Եվրոպայի և միջազգային այլ առաջնությունները, ինչպես նաև կանանց և տղամարդկանց «Պրո Լիգա»-ների եզրափակիչները: Յութուբյան ալիքը գործում է 2020 թվականից, ունի մոտ 750 հետևորդ, իսկ դիտումների թիվն անցնում է 3000-ը:

Ընդհանուր առմամբ, վոլեյբոլը, ի տարբերություն այլ մարզաձևերի, սոցիալական հարթակների հայաստանյան տիրույթում գրեթե բացակայում է, ինչը, մեր դիտարկմամբ, մասնակիորեն պայմանավորված է սպորտային կառույցներում մեդիամասնագետների ներգրավվածության պակասով, ինչպես նաև ֆինանսական և նյութատեխնիկական սահմանափակումներով: Այնուամենայնիվ, վերջին տարիներին մեդիաառաջխաղացման գործում որոշ տեղաշարժեր նկատվում են. օրինակ՝ Հայաստանի վոլեյբոլի Մ-16 առաջնության հատվածական լուսաբանումը[16], նաև մարզիկների մասնակցությունը հեռուստատեսային հաղորդումներին և փողքասթներին՝ այդ կերպ փորձելով ձևավորել մարզաձևի հանրայնացման նոր հնարավոր ուղիներ:

Հայաստանում վոլեյբոլային իրադարձությունները հիմնականում լուսաբանվում են Fast TV սպորտային հեռուստաալիքով, սակայն քիչ հաճախականությամբ: Ավելի հաճախ մարզաձևը լուսաբանում են fastnews.am, news.am, armsport.am, armenpress.am և մի շարք այլ կայքեր: Դրանք տեքստային նյութերով և ֆոտոռեպորտաժներով ամփոփում են ինչպես դասական, այնպես էլ լողափնյա և ձյան վոլեյբոլի առաջնությունները: Այսպես. հայաստանյան առցանց լրատվամիջոցներն անդրադառնում են վոլեյբոլային իրադարձություններին, սակայն լուսաբանման ծավալն ու խորությունը սահմանափակ են: Մասնավորապես, news.am կայքը սեղմ անդրադարձ է կատարել Հայաստանի ձյան վոլեյբոլի առաջնությանը[13], Երևանում անցկացված վոլեյբոլի տղամարդկանց Եվրոպայի մինչև 22 տարե-

կանների առաջնությանը[12]: Փոխարենը fastnews.am կայքը պարբերաբար լուսաբանում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մրցաշարերը: Հրապարակումներ կան նվիրված «Քաղաքապետի գավաթ 2024» մրցաշարին, Լոզափնյա վոլեյբոլի Մ-18 առաջնությանը[11], 2024 թ. Օլիմպիական խաղերի վոլեյբոլի հանդիպումներին և այլն: Որոշ խաղեր հեռարձակվել են նաև ուղիղ եթերով: Հայաստանի վոլեյբոլի տղամարդկանց հավաքանակի հաղթական ելույթներին[7], ԱՊՀ երկրորդ խաղերում Հայաստանի վոլեյբոլի թիմի հաղթանակին[8] է անդրադաձել armenpress.am-ը: Քանակական վերլուծության արդյունքներով պարզ է դառնում, որ 2023–2024 թթ. ընթացքում վոլեյբոլին նվիրված հրապարակումների թիվը դիտարկված հայաստանյան կայքերում տարեկան կտրվածքով հիմնականում չի գերազանցում 8-ից 10-ը, իսկ բացառիկ դեպքերում միայն այդ սահմանը գերազանցված է:

Ըստ էության՝ վոլեյբոլը հայտնվում է հեռուստաեթերում իրադարձությունից իրադարձություն: Որպես կանոն՝ այն հետևողական չի լուսաբանվում, հաճախակի չեն բարձրաձայնվում հիմնախնդիրները, մտահոգությունները, չեն հանրահռչակվում մարզիկները, հետևաբար մարզաձևի հանդեպ հետաքրքրությունը այնքան էլ մեծ չէ: Ի վերջո, մեծ լսարան ունեցող մեդիահարթակներում վոլեյբոլի խորքային ներկայացման բացակայությունը և ոչ հետևողական լուսաբանումը նաև հանգեցնում է հանրային ընկալման թերագնահատման: Այս խնդիրը արձանագրում են նաև մարզական լրագրողները՝ նշելով, որ վոլեյբոլը Հայաստանում ունի ավանդույթ, բայց մեդիան երբեք այն չի ներկայացրել որպես պատմություն՝ ի տարբերություն այլ մարզաձևերի:

Եզրակացություն: Արդի ժամանակաշրջանում ցանկացած մարզաձևի, այդ թվում՝ վոլեյբոլի զարգացումը գրեթե անհնար է առանց մեդիագործիքների համակարգված և նպատակային կիրառման: Վերջին տասնամյակներում մեդիատեխնոլոգիաների ինտենսիվ զարգացումը էական ազդեցություն է թողել սպորտային հաղորդակցության, մարքեթինգի, հանրային կապերի և առհասարակ՝ մարզական լրագրության ոլորտներում: Վոլեյբոլը՝ որպես թիմային մարզաձև, միջազգային հարթակներում հաճախ է օգտագործում մեդիագործիքներ՝ հանրայնացման, երկրպագուների ներգրավման և հովանավորչական կապերի ամրապնդման նպատակով:

Հայաստանում վոլեյբոլի հանրահռչակման համար մեդիագործիքների կիրառումը ներկայում ունի զգալի չօգտագործված ներուժ: Մարզական լրագրությունը կարևոր դեր ունի վոլեյբոլի հանրայնացման գործընթացում՝

ապահովելով տեղեկատվության շարունակական հոսք, մարզաձևի նկատմամբ հետաքրքրության աճ:

Առաջարկություն: Ակնհայտ է, որ այս ամենի հետ մեկտեղ Հայաստանում վոլեյբոլ մարզաձևի մեդիաառաջխաղացման առումով առկա են թե՛ օբյեկտիվ խոչընդոտներ, թե՛ իրական և իրագործելի հնարավորություններ: Միջազգային հաջողված փորձի համադրումը տեղական հնարավորությունների հետ վկայում է, որ ՀՀ-ում վոլեյբոլի հանրայնացման համար անհրաժեշտ է ձևավորել մեդիաառաջխաղացման հստակ ռազմավարություն, որը պետք է ներառի մի քանի ուղղություններ՝ վիզուալ բովանդակության ստեղծումից մինչև հարցազրույցների անցկացում մարզիկների, մարզիչների, երկրպագուների հետ, վիճակագրական ինֆոգրաֆիկաների պատրաստում (խաղերի արդյունքներ, ռեկորդներ, անհատական ցուցանիշներ և այլն), ֆլեշմոբերի անցկացում՝ օգտատերերի ներգրավման համար, փոդքաստների և վերլուծական հաղորդումների հեռարձակում (մեկնաբանություններ, վերլուծություններ խաղերից առաջ), հետխաղային ամփոփումներ, բլոգերների և սպորտային ինֆլուենսերների ներգրավում, վոլեյբոլային սյունակների մշտական ներկայություն տպագիր և էլեկտրոնային մամուլում, PR արշավների և միջոցառումների կազմակերպում, մարզիկների հեղինակության ձևավորում թվային միջավայրում և այլն: Այս և այլ գործիքակազմի համադրված կիրառումը հնարավորություն կտա վոլեյբոլը դուրս բերել ստվերից, բարձրացնել հանրային հետաքրքրությունն ու ներգրավվածությունը, ինչպես նաև խթանել մարզաձևի հանրահռչակումը:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասմարյան Խ., Ասմարյան Կ., Հայաստանի վոլեյբոլի պատմության ուրվագծեր, Մենագրություն, Երևան, 2005, էջ 8–9:

2. Ասմարյան Կ., Վոլեյբոլ, Մենագրություն, Երևան, 2007, էջ 7:

3. Кузнецова И. С., Медиа и спорт: влияние медиа на развитие спортивных дисциплин. Современные исследования социальных проблем, 2019, №1(33), с.45–51.

4. Савченко, А. О., Информационные технологии в физической культуре и спорте, 2018, РГППУ.

5. Boyle R., Sports Journalism: Context and Issues: London: SAGE Publications, 2006.

6. Hutchins, B., & Rowe, D., Digital Media Sport: Technology, Power and Culture in the Network Society; London, Routledge, 2012.

7. https://armenpress.am/hy/article/1117019 [մուտք՝ 05.04.2025]

8. https://armenpress.am/hy/article/1188248 [մուտք՝ 01.05.2025]

9. https://armsport.am/483872/ [մուտք՝ 02.06.2025]

10. https://en.volleyballworld.com/news/volleyball-world-continues-to-shine-on-social-media?utm_source= [մուտք՝ 11.04.2025]

11. https://fastnews.am/sport/post/hayastani-thimy-vtchrvorvosh-khaghvoum-haghthel-e-adrbejanin [մուտք՝ 15.04.2025]

12. https://sport.news.am/arm/news/138781/voleyboli-ea-m-22-mrcashar-erevanum.html [մուտք՝ 05.04.2025]

13. https://sport.news.am/arm/news/147143/dzyan-voleyboli-hayastani-chempionnern-u-medalakirnery-foto.html [մուտք՝ 25.04.2025]

14. https://volleyball.lenobl.ru/ru/news/79703/; Լենինգրադի մարզի «Վոլեյբոլի մարզական դպրոց» լրացուցիչ կրթության պետական բյուջետային հաստատություն [մուտք՝ 05.04.2025]

15. https://www.araratnews.am/show/85439 [մուտք՝ 12.05.2025]

16. https://www.aysor.am/am/news/2024/06/04/%D5%B0%D5%A1%D5%B2%D5%A9%D5%B8%D5%B2/2286768

17. https://www.cev.eu/ [մուտք՝ 07.03.2025]

18. https://www.fivb.com/ [մուտք՝ 20.04.2025]

19. https://www.fivb.com/fivb-president-closes-congress-and-promises-bright-future-for-volleyball/?utm_source= [մուտք՝ 25.04.2025]

20. https://www.instagram.com/explore/search/keyword/?q=%23bepartofthegame

21. https://www.instagram.com/explore/search/keyword/?q=%23volleyballworld

22. https://www.youtube.com/volleyballworld 19.06.2025 թ.-ի դրությամբ

THE USE OF MEDIA TOOLS IN THE PROMOTION AND DEVELOPMENT OF VOLLEYBALL: INTERNATIONAL EXPERIENCE AND IMPLEMENTATION PROSPECTS IN THE REPUBLIC OF ARMENIA

A.Sh. Mkrtichyan[1], K.G. Yeghiazaryan[2]
[1]Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,
[2]Volleyball Federation of Armenia, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Volleyball, media, media tool, coverage, website, social network, audience, media promotion.

Research relevance: In the modern world media plays a significant role in the promotion and development of sports. Volleyball, as a popular team sport that is increasingly spreading in Armenia, requires systematic and consistent media representation. Although the sport has wide development prospects the applied efforts are not always sufficient, especially in terms of the chosen media tools.

Research aim: To analyze the role and potential of media tools in the promotion and development of volleyball by examining the Armenian media and international best practices and to justify the possibilities for effectively utilizing media potential.

Research methods and organization: The research was conducted using analytical, comparative, and journalistic study methods. The study focused on the activity of Armenian media over past two years, covering 2023–2024 and also examined international experience.

Research result analysis: As a dynamic and emotionally team sport, volleyball has become one of the key platforms for the experimental application of media tools over the past decade. International volleyball organizations use media not only to convey information to audiences but also to create participatory media. In Armenia, the development of sports media has seen some progress in recent years; however, the coverage of volleyball remains uneven.

Conclusion: Today the development of any sport, including volleyball is almost impossible without the systematic and purposeful use of media tools. In Armenia the use of media tools for the development of volleyball currently has significant untapped potential. Sports journalism plays an important role in popularizing volleyball.

ИСПОЛЬЗОВАНИЕ МЕДИАТЕХНОЛОГИЙ В ПОПУЛЯРИЗАЦИИ И РАЗВИТИИ ВОЛЕЙБОЛА: МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ И ПЕРСПЕКТИВЫ РЕАЛИЗАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

А.Ш. Мкртичян[1], К.Г. Егиязарян[2],
[1]Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения,
[2]Федерация волейбола Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: Волейбол, СМИ, медиа-инструмент, освещение, сайт, социальная сеть, аудитория, медиапродвижение.

Актуальность исследования: В современном мире медиа играет важную роль в популяризации и развитии спорта. Волейбол, как популярная командная игра, которая получает всё большее распространение в Армении, нуждается в системном и последовательном медиа освещение. Несмотря на широкие перспективы развития вида спорта, предпринимаемые шаги не всегда являются достаточными, особенно в контексте выбора медиаресурсов.

Цель исследования: Проанализировать роль и возможности применения медиа инструментов в популяризации и развитии волейбола, исследуя медиа Армении и международный опыт, также обосновать потенциал эффективного использования медиа.

Методы и организация исследования: Исследование было проведено с использованием аналитического, сравнительного и журналистского методов. Был рассмотрен опыт армянских медиа за последние два года (2023–2024 гг.), а также проанализирован международный опыт.

Анализ результатов исследования: Волейбол, как командный вид спорта с динамичным и эмоционально насыщенным содержанием, за последнее десятилетие стал одной из ключевых платформ для экспериментального применения медиа инструментов. Международные волейбольные организации используют медиаинструменты не только для передачи информации аудитории, но и с целью вовлечения активных участников, которые будут создавать медиаконтент. В Армении развитие спортивных медиа в последние годы зафиксировало определённый прогресс, однако освещение волейбола остаётся несбалансированным.

Краткие выводы: Сегодня развитие любого вида спорта, в том числе волейбола, практически невозможно без систематического и целенаправленного использования медиа инструментов. В Армении применение медиаресурсов для развития волейбола в настоящее время обладает значительным неиспользованным потенциалом. Спортивная журналистика играет важную роль в популяризации волейбола.

Տեղեկություններ հեղինակների մասին

Աննա Շահենի Մկրտիչյան՝ բ.գ.թ., Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: anna.mkrtichyan@sportedu.am, ORCID: 0009-0005-7469-9912

Քրիստինե Գնելի Եղիազարյան՝ Հայաստանի վոլեյբոլի հավաքական թիմերի գլխավոր մենեջեր, ազգային կարգի մրցավար, Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա, Երևան, Հայաստան, E.mail: kristine.yeghizaryan.2021@sportedu.am

Information about the authors

Anna Shahen Mkrtichyan, PhD, Lecturer, Chair of Sports Management and Sports Journalism, Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia

E-mail: anna.mkrtichyan@sportedu.am, ORCID: 0009-0005-7469-9912

Kristine Gnel Yeghiazaryan, General Manager of the Armenian National Volleyball Teams, National-Level Referee, Volleyball Federation of Armenia, Yerevan, Armenia

E-mail: kristine.yeghizaryan.2021@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 04.05.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 05.05.2025–ին:

Գրախոս՝ կ.գ.թ., դոցենտ Տ. Պետրոսյան